ՄԱՐՏՈՒՆ ՍՐԿ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (Է.-Ը. դարեր)

Եկեղեցաբանությունը վարդապետական աստվածաբանության էական ու կարեւոր բաժիններից է: Այն ուսումնասիրում է Եկեղեցու, նրա էության, կեցության եւ հիմնական սկզբունքների, դերի ու գործառույթի առանցքային կողմերը: Եկեղեցաբանության հիմնական խնդիրներից է՝ արտահայտել Քրիստոսի Եկեղեցու աստվածաբանական գլխավոր բնութագրիչները, ցույց տալ հասարակության մեջ եկեղեցական ծառայության կարեւորությունը՝ հաշվի առնելով հանրության հոգեւոր գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները: Չնայած այն հանգամանքին, որ «եկեղեցի» բառն այսօր հաճախ կիրառվող ու գործածվող բառերից է, այդուհանդերձ իր իմաստային եւ բովանդակային ընդգրկունությամբ այն համակարգված վերլուծության չի ենթարկվել բազմադարյան ավանդ ունեցող հայ աստվածաբանական հարուստ ժառանգության անդաստանում: Պետք է նշել, որ ինչպես Հայ, այնպես եւ Ընդհանրական Եկեղեցու աստվածաբանական մտքի պատմության մեջ առավելաբար ու անհրաժեշտաբար կարեւորվել են քրիստոսաբանական, երրորդաբանական, փրկաբանական եւ այլ դավանաբանական խնդիրներ՝ պայմանավորված ժամանակի եկեղեցաքաղաքական կյանքը փոթորկող իրողություններով: Եւ միայն Ի. դարից սկսած՝ Եկեղեցու մասին ուսմունքը դրվել է աստվածաբանական քննարկումների կենտրոնում: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի՝ 1948 թ. Ամստերդամում կայացած առաջին գլխավոր ժողովի ժամանակ Գ. Ֆլորովսկին հայտարարում է, որ Եկեղեցու մասին ուսմունքը դեռեւս նոր է դուրս գալիս նախաաստվածաբանական փուլից[1]:

Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ հայ իրականության մեջ դեռեւս վաղ միջնադարում այն եղել է ուսումնասիրված ոլորտ: Մասնավորապես Է.-Ը. դարերի հայ եկեղեցական մատենագիրներն ունեցել են բավական զարգացած եկեղեցաբանական միտք: Նրանք ստեղծել ու մշակել են Եկեղեցու մասին հա-

1 Տե՛ս **Colin W. Williams**, The Church. New Directions in Theology Today, vol. 4, Philadelphia, 1969, էջ 11:

մապարփակ ուսմունք: Աստվածաշնչյան հիմքերի ու հայրախոսական հարուստ ժառանգության հետևությամբ ցույց են տվել Եկեղեցու դերը, նրա առանցքային կարևորությունն ու առաքելությունը քրիստոնեական կյանքում: Պետք է նշել, որ հայ հեղինակների արտահայտած եկեղեցաբանական գաղափարները չեն ներառվել ամբողջական, համակարգված տեսության մեջ, այսինքն՝ չունեն հստակ խմբավորում:

Սույն ուսումնասիրության համար Է.-Ը. դարերի հայ եկեղեցական մատենագիրներից ընտրողաբար առանձնացրել ենք Հովհան Մայրագոմեցուն («Վերլուծութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյ եւ որ ի նմա յաւրինեալ կարգաց»), Ս. Հովհան Օձնեցուն («Հատուածք բանից Յովհաննու Իմաստասիրի ի հաւաքմանց յաղագս կարգաց եկեղեցւոյ եւ յիշատակարան», «Նորին Տեառն Յովհաննիսի Հայոց Կաթողիկոսի յաղագս կարգաց Եկեղեցւոյ»), Ստեփանոս Սյունեցուն («Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցւոյն», «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ») եւ Հովհաննես Քորեպիսկոպոսին («Ներբողեան ի Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի»)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Եկեղեցու մասին տվյալ շրջանի ուսմունքը համեմատաբար ընդարձակ արտահայտված է նրանց եկեղեցաբանական բնույթի գործերում:

1.Եկեղեցու հիմնադրումը.

ա) Եկեղեցին Աստծո ծրագրում. Հայ նշանավոր եկեղեցական գործիչ, եկեղեցական մատենագիր Ստեփանոս Սյունեցին հստակ ցույց է տալիս, որ Եկեղեցու խորհուրդը Աստծո մտքում գոյություն ուներ նախքան աշխարհի արարումը. «*...քանզի ոչ այժմ ծանեալք զիտորհուրդ եկեղեցւոյ, այլ յառաջ քան զլինել աշխարհի էր առ Աստուած խորհրդածանաւթիւն սորա*»[2]: Հետևաբար, Եկեղեցու պատկերը գոյություն ուներ Աստծո խորհրդավոր ծրագրում դեռևս արարչագործությունից առաջ: Եւ դա այլ բան չէր, եթե ոչ որպես հաղորդակցության, միության, ճշմարտության եւ բացարձակ հավասարության իսկական կյանքի դրսևորում պատմական իրականության մեջ:

Եկեղեցու պատմական ընթացքը, որն սկսվեց Հիսուս Քրիստոսով, միաժամանակ բացահայտումն է արարչության մեջ մարդու ստեղծման աստվածային ծրագրի: Ստեփանոս Սյունեցին մեջ է բերում Պողոս առաքյալի՝ Կողոսացիներին ուղղված նամակի հետևյալ հատվածը. «*...որպէս առաքեալ ասէ. «զիտորհուրդն, որ ծածկեալ էր յաւիտեանցն եւ յազգացն*»[3] (Կող. Ա. 26): Այդ խորհուրդը մարդկային ցեղի փրկությունն է Հիսուս Քրիստոսով. արար-

2 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ». «Մատենագիրք հայոց», հտ. Զ., Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 505 (այսուհետև՝ ՄՀ):

3 Անդ:

չությունից ի վեր այն թաքնված էր Աստծո մտքում: Ուստի, Եկեղեցին որոշակի պատմական իրականության մեջ, իր էության լիակատար դրսևորմամբ, ընդունում է Աստծո հետ ամենասերտ հարաբերություն. այլ կերպ ասած՝ Եկեղեցու խորհուրդը գոյություն ուներ Աստծո խորհրդավոր ծրագրում նախեւառաջ իբրեւ մարդ էակի եւ Իր միջեւ ամենասերտ հաղորդակցություն, որն իր արտահայտումն է գտնում Եկեղեցու կյանքում հաղորդության խորհրդի միջոցով: Ավելորդ չէ նաեւ նշել, որ Ստեփանոս Սյունեցին Աստծո ծրագրում Եկեղեցին իբրեւ խորհուրդ է ընկալում, որն իր բացահայտումը գտնելու էր ժամանակի լրումին Աստծո Որդու հայտնությամբ եւ զոհաբերմամբ. *«...եկեալ հասեալ էր մեր փրկութիւնն ի լրումն ժամանակաց խորհրդոյն կատարման»*[4]: Ուստի, Հայրը Որդու միջոցով կանչում է բոլոր հավատացյալներին, որպեսզի ամենասերտ հաղորդակցության հիման վրա կազմվի «Աստծո ընտանիքը»: Հովհան Օձնեցին, այս ամենը հաստատելով, միաժամանակ Եկեղեցու հիմնադրությունը համարում է Աստծո նախաժամանակյա տնօրինումը. *«...սկզբնաւորեալ ի կանխութենէ լինելիութեան արարածոց յանսկիզբն Արարողէն, որ նա ինքն է սկիզբն եւ կատարած հաստատութեան եկեղեցւոյ...»*[5]: Կարեւոր ենք համարում նշել նաեւ, որ Սյունեցին հստակ տեսնում է «յառաջ գուշակումն մարգարէից վասն եկեղեցւոյ»[6] :

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Եկեղեցին կազմավորվեց Աստծո ունեցած խորհրդավոր հեռանկարով: Եկեղեցու լինելությունը ամբողջությամբ կարող է բացահայտվել միայն աներեւույթ Աստծո իմաստության եւ բացարձակ բարության խորհրդավոր տնօրինության միջոցով:

բ) Քրիստոս՝ Եկեղեցու հիմնադիր. Եկեղեցու մասին մարգարեական կանխասացությունները *(գուշակումն մարգարէից վասն եկեղեցւոյ),* ինչպես նշում է Ստեփանոս Սյունեցին, իրենց լրումն են գտնում Քրիստոսով, որը եւ դնում է Եկեղեցու հիմքը: Հեղինակն այս խորհուրդը բացատրում է հետեւյալ տեսանկյունից. *«Քանզի Քրիստոս իւրով չարչարանաւքն հիմն եղ եկեղեցւոյ զիւր մարմին»,* ապա ցույց տալիս՝ *«...եւ շինեաց առաքելովք եւ մարգարէիք»*[7]: Եկեղեցու աստվածադիր հաստատության մասին է խոսում նաեւ Հովհան Օձնեցին՝ գրելով. *«...Տէր հաստատեաց եւ ոչ՝ մարդ, որ եղ զհիմունս սորա ոչ ըստ մարգարէութեանն ի քարանց պատուականաց շափիւղայ եւ կարկեհան, այլ ինքն եղեւ վէմ անկեան, եւ հիմունս արկ սմա*

4 «Հատուածք բանից Յովհաննու Իմաստասիրի ի հաւաքմանց յաղագս կարգաց եկեղեցւոյ եւ յիշատակարան» (Ճառ Ա.՝ «Աւրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ»), ՄՀ, հտ. Է., 2007, էջ 91:

5 Անդ, Ճառ Բ.՝ «ՅԵկեղեցի», էջ 100:

6 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցւոյն», ՄՀ, հտ. Զ., էջ 487:

7 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ», ՄՀ, հտ. Զ., էջ 503:

զառաքեալս եւ զմարգարէս»[8]*:* Հեղինակը մեր ուշադրությունը հրավիրում է այն գլխավոր հանգամանքի վրա, որ Եկեղեցին մարդկային հաստատություն չէ, այսինքն՝ մարդկային ուժերով չի կառուցվել, այլ միանգամայն ստեղծված է Տիրոջ կողմից, որը, լինելով անսկիզբ Արարող, միեւնույն ժամանակ *«...է սկիզբն եւ կատարած հաստատութեան եկեղեցւոյ»*[9]*:* Այս երկու հեղինակներն ընդգծում են նորկտակարանյան պատկերներից ոչ միայն առաքելական ու մարգարեական հիմքը, այլ նաեւ բուն քրիստոսակենտրոն հաստատությունը, որի առնչությամբ Հովհան Օձնեցին խորհրդական վեմի օրինակն է կիրառում. *«Զոր որպէս լուաք ի մարգարէիցն, սոյնպէս եւ տեսաք, զի Ասպուած խորհրդական վիմաւք հիմնեցոյց զսա»*[10]: Այդ խորհրդական վեմը հենց Քրիստոս է, որի վրա էլ հաստատուն է Եկեղեցին: Եւ Աստված է, որ կենդանացնում, զորացնում է իր ստեղծածը եւ անբեկանելի ամրություն հաղորդում նրան:

Իսկ Եկեղեցու հիմնադրման բուն սկիզբը Քրիստոսի կողմից տասներկու աշակերտների ընտրությունն է, որի մասին Հովհան Օձնեցին այսպես է գրում. *«...Տէրն մեր զերկոտասան աշակերտսն ի հոսանուտ վայրէ կենցաղոյս առեալ ի վկայութիւն խորհրդական անցիցն հեթանոսաց ընդ ջուր մկրտութեան աւազանին, որոց եւ ասաց, «Գնացէք եւ մկրտեցէք յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»»*[11] (հմմտ. Մատթ. ԻԸ. 1-9):

Եկեղեցու հիմնադրման մյուս կարեւոր հանգրվանը Հոգեգալուստն է, որով եւ Եկեղեցին տեսանելի կերպով բացվում է բոլորի առջեւ: Հոգեգալստից հետո առաքյալները գնում են տարբեր կողմեր՝ քարոզելու եւ մկրտելու մարդկանց: Այս առնչությամբ նույն հեղինակը գրում է. *«Իսկ յետ յարութեանն ասաց նոցա մկրտիլ ի հուր եւ ի Հոգին Սուրբ, եւ մկրտել զհեթանոսս յանուն Սրբոյ Երրորդութեանն...»*[12]*:* Առաքելական հայրերից Իգնատիոս Անտիոքացին Եկեղեցու հիմնադրումը ներկայացնում է այն տեսանկյունից՝ նախ Քրիստոս իր շուրջը խումբ հավաքեց, Հոգեգալստից հետո ձեւավորվեց միջուկը, ապա Եկեղեցին գոյատեւեց միշտ, ու նրա գոյությունը անբաժանելի է քրիստոնեությունից[13]: Այստեղ տեսնում ենք հիշյալ հեղինակների տեսակետների նմանությունը Եկեղեցու հիմնադրման շարունակական ընթացքի վերաբերյալ:

Ստեփանոս Սյունեցին նկարագրում է, որ ինչպես Եւան ստեղծվեց Ադամի կողից, այնպես եւ *«...Քրիստոս ի կողմից իւրոց շինեաց զեկեղեցի... Քանզի աղբեւրն, որ ել ի կողիցն նորա, կանգնեաց զԵկեղեցի Իւր փառա-*

8 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», ՍՀ, հտ. Է., էջ 95:

9 Անդ, էջ 100:

10 «Հատուածք բանից Յովհաննու Իմաստասիրի ի հաւաքմանց յաղագս կարգաց եկեղեցւոյ եւ յիշատակարան» (Ճառ Ա.՝ «Հիմնարկէք եկեղեցւոյ»), էջ 88:

11 Անդ:

12 Անդ, էջ 89:

13 Տեմ «Թուղթք Սրբոյն Իգնատիոսի Աստուածազգեաց մարտիրոսի Անտիոքայ եպիսկոպոսի», Կ. Պոլիս, 1783:

ւոր»[14]*:* Խոսքը Քրիստոսի խաչելության, զոհաբերման մասին է, որի շնորհիվ եւ փառավորապես «կանգնեաց զԵկեղեցի»: Իսկ այդ զոհաբերումը հիմնված էր մարդկության հանդեպ բացառիկ սիրո վրա, այն ասփիճան, որ անգամ *«...թողեալ զՄայր իւր յերկրի՝ եւ ի Խաչ վասն եկեղեցւոյ»*[15]*:*

գ) Եկեղեցու իշխանությունը. Եկեղեցու իշխանության ակունքը եւ նրա վավերականության հիմնական երաշխիքն ու աղբյուրը Հիսուս Քրիստոս է: Ավետարանական դրվագները պարզորոշ ցույց են տալիս, որ Քրիստոս հաստատեց Եկեղեցին, օժտեց նրան իշխանությամբ ու առաքելությամբ, հատուկ նպատակով եւ հեղինակությամբ: Այսինքն՝ Եկեղեցու իշխանությունը բխում է նրա իսկ բնությունից՝ սահմանված Եկեղեցու հիմնադրի կամքով[16]: Եկեղեցու նվիրապետությունը օժտված է իշխանությամբ ու իրավասությամբ, որով եւ ի զորու է *«...իբրեւ զձրագ անշեջ վառմամբ առաջնոդել եւ լուսաւորել զտկար եւ զտգէտ ոգիս»*[17], - ինչպես գրում է Ստեփանոս Սյունեցին:

Հովհան Օձնեցին, անդրադառնալով եկեղեցական իշխանության ծագման խնդրին, ասում է. *«Այսպէս եւ ամենայն քահանայապետութիւն եկեղեցւոյ սկիզբն եւ արմատ եւ կատարումն զՅիսուս ունելով զերկնային քահանայապետ հանդերձելոցն բարեաց... Արդ, կարեւորապէս առաջնորդն մերոյ քահանայութեանս ի գերագոյն Աստուածպետութենէն լցեալ պարգեւէ...»*[18]*:* Ցանկացած առողջ մարմին չի կարող գոյություն ունենալ եւ առաջնորդվել առանց վավերական, մարմնի տարբեր մասերը միավորող կենտրոնի[19]: Հովհան Օձնեցին նկատում է. *«Եւ դասք պաշտաւնէից որոշեալք ի սմա երկնայնոցն դասուց զանազան ունողաց զդասս եւ զպաշտաւն նշանակաբար ունին զաւրութիւն»*[20]*:* Այս առումով եկեղեցական պաշտոնյաների շնորհն ու առաքելությունը իրենցը չէ, այլ՝ Քրիստոսինը, քանի որ *«...ի գլուխ ամենայնի կենարար խորհրդեանն քահանայագործութիւն եւ հաղորդութիւն աւանդ է տէրունական»*[21]*:*

Եկեղեցու սպասավորներն ու պաշտոնյաները կարգված են որպես վերակացուներ քրիստոնեական հավատի ջահի անաղարտ պահպանման, որպեսզի Բանի շնորհով լուսավորեն հավատացյալներին[22]: Ստեփանոս Սյունեցին Եկեղեցու առաջնորդներին այլաբանական օրինակով բնորոշում է իբրեւ ճարտարապետների. *«Իսկ վարդապետք եւ առաջնորդք եկեղեցւոյ ճարտարապ-*

---

14 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ». էջ 506:
15 Անդ:
16 Տեմ **Մաղաքիա արք. Օրմանեան,** Տեղիք ապրուածաբանութեան, Երուսաղէմ, 1985, էջ 20:
17 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ». էջ 511:
18 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», էջ 97:
19 Տեմ **Մաղաքիա արք. Օրմանեան,** նշվ. աշխ., էջ 20:
20 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», էջ 97:
21 Ճառ Ա.՝ «Աւրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ», էջ 94:
22 Տեմ **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 511:

պետք եւ շինիչք ամենայն մարմնոյ, որ է եկեղեցի»[23]*:* Նա ցույց է տալիս, որ բոլոր նրանք, որոնք Եկեղեցու գահերիցության բարձր պաշտոնն ունեն, պետք է մաքուր եւ անաղարտ վարքով ապրեն՝ ըստ առաքելական խրատի. «Պարտ է եպիսկոպոսն անարատ լինել» (Ա. Տիմ. Գ. 2, Տիտ. Ա. 7), իբրեւ Աստծո տնտեսներ, այնուհետեւ ավելացնում է. *«Նոյնպէս երիցանց եւ սարկաւագաց ոնէ օրէնս, ըստ եպիսկոպոսաց կարգի»*[24]*:* Սույն առնչությամբ Հովհաննես Քոռեպիսկոպոսը, իր խոսքն ուղղելով քահանաներին, կոչ է անում իրենց իշխանության, առաքելության իրագործման ընթացքում նմանվել Հիսուս Քրիստոսին. *«Մատուցցուք աբրահամեան յաժարութեամբ եւ սուրբ հաւատով պատարագ զԻսահակ՝ զանձինս մեր, ո՛վ քահանայք: Քրիստոսի լիցուք նմանողք, Որդւոյն Աստուծոյ...»*[25]*:*

Հովհան Մայրագոմեցին, խոսելով քահանաների սրբակենցաղության, մաքրության մասին, մեջ է բերում Սաղմոսաց գրքի հայտնի տողերը. *«Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն»*[26] (Սղմ. ՃԼԱ. 9): Հեղինակը ցույց է տալիս, որ սուրբ սեղանի պաշտոնյաները՝ քահանաները, ըստ սաղմոսի վկայության, պետք է արդարությունը հագնեն որպես զգեստ, որպեսզի իբրեւ ահեղ խորհրդի սպասավորներ՝ դասակից լինեն հրեշտակներին: Այնուհետեւ նշում է, որ եպիսկոպոսների գլուխը հայրապետն է՝ որպես *«...միջնորդ Աստուծոյ եւ մարդկան»*[27], ապա՝ հավելում. *«...ոչ այլ ունէք այլ քահանայական դասուն է իշխանութիւն զայս ընծայս մատուցանել Աստուծոյ»*[28]*:*

Վերը նշվածներն ի մի բերելով՝ անհրաժեշտ է փաստել, որ Եկեղեցում հաստատված պաշտոնեությունն սպասավորություն է, որ իրագործվում է Քրիստոսի անունով: Հովհան Մայրագոմեցին թվարկում է նվիրապետական աստիճանները. *«...եպիսկոպոսք եւ քահանայք եւ սարկաւագունք եւ կէսք սարկաւագացն եւ գրակարդացք եւ սաղմոսասացք եւ այլ պաշտոնեայք, խոնարհագոյն մի քան զմի...»,* ապա՝ նշում, որ նրանք, ինչպես մեկնում են Բարսեղ Կեսարացին եւ նրա եղբայր Գրիգոր Նյուսացին, մեզ *«վերին անմարմնական դասուցն երկնային զարուցն»* օրինակն են բերում[29]:

2. Եկեղեցու սուրբ խորհուրդները.

ա) Ս. Մկրտություն. Եկեղեցու կազմավորման ու ձեւավորման շարունակական ընթացքի կարեւորագույն հանգրվան են Մկրտության եւ Հաղորդութ-

23 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ», էջ 503:
24 Անդ:
25 **Հովհաննես Քոռեպիսկոպոս,** Ներբողեան ի Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի, ՄՀ, հտ. Զ., էջ 613:
26 **Հովհան Մայրագոմեցի,** Վերլուծութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյ եւ որ ի նմա յարիւնեալ կարգաց, ՄՀ. հտ. Դ., 2005, էջ 353:
27 Անդ:
28 Անդ, էջ 352:
29 Տե՛ս անդ, էջ 353:

յան խորհուրդները, որոնք ունեն ասպվածային հիմնադրություն. այդ խորհուրդները հաստատել է հենց ինքը՝ Հիսուս Քրիստոս:

Մկրտությունը քրիստոնեական կյանքի նախահիմքն է: Այն անհրաժեշտ եւ անփոխարինելի նախապայման է յուրաքանչյուր աղամորդու՝ Քրիստոսի ու Եկեղեցու պատկանելության համար[30]: Հովհան Օձնեցին ներկայացնում է Քրիստոսի պատգամը, որը տրվեց աշակերտներին. *«...Տէրն մեր զերկոտասան աշակերտսն ի հոսանուտ վայրէ կենցաղոյս առեալ ի վկայութիւն խորհրդական անցիցն հեթանոսաց ընդ ջուր մկրտութեան աւազանին, որոց եւ ասաց. «Գնացէ՛ք եւ մկրտեցէ՛ք յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»*[31] (հմմտ. Մատթ. ԻԸ. 19): Քրիստոս անձամբ է հաստատում, որ մկրտությունն անհրաժեշտ է փրկվելու համար, ուստի պատվիրում է իր աշակերտներին, որ գնան ու քարոզեն Ավետարանը՝ բարի լուրը եւ մկրտեն բոլոր ազգերին: Հեղինակը ցույց է տալիս մկրտության մաքրագործող եւ նորոգիչ գործառույթը. *«...մկրտութեամբն մաքրէ եւ նորոգէ զմարդիկ ի կեանս արդարութեան»*[32]*:* Այն սրբում ու մաքրագործում է մարդկային բնությունը, վերստին ծնունդ տալիս Սուրբ Հոգու շնորհած նորոգ կյանքով: Մկրտությամբ Քրիստոս փրկում է մեզ Սուրբ Հոգու նորոգությամբ եւ ավազանից վերստին ծննդյան միջոցով (Տիտ. Գ. 5): Այս մասին նույն հեղինակը գրում է. *«Ասէ Հոգի Սուրբ ծաւալեալ ի վերայ աւազանին, զբնութիւնս մեր կենդանակերպելով, ծնանի նոր ծնունդ նորաստեղծուր զարդարեալ»*[33]*:*

Հովհան Օձնեցին մկրտությունը որակում է. *«...լուսաւոր մկրտութեամբ աւազանին երկնեալք եւ ծնեալք ի ժառանգութիւն Աստուծոյ Հոգւովն սրբարարաւ»*[34]*:* Մկրտությամբ ընդունում ենք Քրիստոսին, որը ճշմարիտ լույս լինելով՝ լուսավորում է ամենքին (հմմտ. Հովհ. Ա. 9): Եւ իրականում, հիմնական նպատակը, որի համար Հիսուս հաստատեց Իր Եկեղեցին, մարդկանց լուսավորումն է եւ ապա՝ միավորումը Աստծո հետ[35]:

Ստեփանոս Սյունեցին, մկրտության ավազանը դիտարկելով որպես Քրիստոսի հավատացյալների մայր, տերունական խոսքով փաստում է այդ ավազանից վերստին ծնունդը՝ որպես երկնքի արքայությունը՝ հավիտենական կյանքը ժառանգելու նախապայման. *«Իսկ աւազանն, որ հաստատեալ կայ յեկեղեցւոջ, որպէս Մայր մեր, հոգեւոր ծնունդեամբ ջրով եւ Հոգւով վերստին ծնանի, որպէս Փրկիչն ասէր՝ յաւազանէն վերստին ոչ ծնելոցն ոչ մտա-*

30 Տե՛ս **Զարեհ արք. Ազնաւորեան**, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հաւատամքին, Հալէպ, 2008, էջ 375:

31 Ճառ Ա.՝ «Հիմնարկէք եկեղեցւոյ», էջ 88:

32 Ճառ Բ.՝ «Եկեղեցի», էջ 98:

33 Անդ, էջ 97:

34 Անդ, էջ 96:

35 Տե՛ս **Макарий Булгаков**, Православно-догматическое богословие, т. II, Санкт-Петербург, 2006, էջ 203:

նել յարքայութիւն երկնից»[36]*:* Այս միտքն է ընդգծում նաեւ Կյուրեղ Երուսաղեմացին՝ նշելով, որ մկրտության միջոցով Եկեղեցում բացվում են հավիտենական կյանքի դռները, առանց մկրտության չկա փրկություն[37]:

Ստեփանոս Սյունեցին Մկրտության խորհուրդը բացատրում է հինկտակարանյան պատկերների միջոցով. *«...որպէս աղբերն ոռոգէր զդրախտն, նոյնպէս եւ աւազանն ոռոգանէ զեկեղեցին եւ լուսափթիթ պայծառացուցանէ զմանկունս նորա: Եւ որպէս Ադամա ապականեցաւ պատկեր Աստուծոյ, նոյնպէս եւ քրիստոնեայք՝ պատկեր Աստուծոյ եղեն աւազանաւ»*[38]*:* Բավական գեղեցիկ ու խորհրդավոր զուգահեռ է անցկացնում դրախտի աղբյուրի եւ մկրտության ավազանի միջեւ՝ ընդգծելով ավազանի՝ աղբյուրի նմանությամբ ունեցած կենսատու դերը: Ադամով անկում ապրած մարդկությունը այս սուրբ խորհրդի միջոցով վերականգնում է իր աստվածային պատկերը: Եթե մարդը մարմնավոր ծնունդով ստանում է Ադամի պատկերը՝ իբրեւ հին մարդ, ապա մկրտությամբ՝ ջրից ու Հոգուց նորից ծնվելով՝ Քրիստոսի պատկերն է ստանում՝ որպես նոր մարդ: Սա նշանակում է, որ հին մարդը մեռնում է, եւ մկրտյալը դառնում է նոր արարած՝ հոգով ու բնությամբ: Հին մարդու մահվան խորհուրդն է ցույց տալիս Ս. Գրիգոր Նյուսացին՝ նշելով, որ մկրտությունը Քրիստոսի մահվան նմանությունն է, եւ արդեն սկիզբը մեր հարության. այն ելքն է մահվան լաբիրինթոսից[39]: Իսկ Ս. Աթանաս Ալեքսանդրացին մկրտությունը համարում է մարդու հարության եւ փրկության հիմքն ու արմատը[40]:

Հովհան Մայրագոմեցին հավաստում է, որ մկրտությամբ հավատացյալները դառնում են Աստծո որդեգիր զավակներ, Նրա ժառանգակիցներ. Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով *«...ծնեալք ջրով եւ Հոգւով ընծայէ որդեգրութեան անուամբք ժառանգս Աստուծոյ լինել»*[41]*:* Նույն միտքն է արտահայտում Հովհան Օձնեցին՝ հավելելով, որ այսու[42] մարդը դառնում է բնակարան՝ Աստծո տաճար. «Իսկ աւազանն հաստատեալ մայր է որդեգրութեան հոգեւոր ծննդոց, որ ի ջրոյ եւ ի Հոգւոյ վերստին ծնեալ՝ լինին որդիք Աստուծոյ, եւ արեանն Քրիստոսի հաղորդեալք՝ ժառանգակից նմին եղիցին, եւ բնակարան Հոգւոյ նորա Սրբոյ»[43]: Բավական հետաքրքիր են նաեւ Բարսեղ Կեսարացու՝ մկրտության

36 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ», էջ 492:

37 Տե՛ս **Ս. Կյուրեղ Երուսաղեմացի,** Կոչումն ընծայության, Ս. Էջմիածին, 2007, էջ 18, 48:

38 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 505:

39 Տե՛ս **В. Н. Лосский**, Очерк мистического богословия Восточной церкви. Догматическое Богословие, М., 1991, էջ 135:

40 Տե՛ս անդ:

41 **Հովհան Մայրագոմեցի,** նշվ. աշխ., էջ 352:

42 Տե՛ս **Կլաուդիո արք. Գուջերոտտի,** Հովհան Օձնեցին եւ նրա՝ Եկեղեցու խորհրդաբանությունը. «Գարեգին Ա.» հայագիտական-աստվածաբանական կենտրոն. Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը եւ իր ժամանակը (գիտաժողովի նյութեր), Ս. Էջմիածին, 2004, էջ 53:

43 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», էջ 102:

համար օգտագործած պատկերները, որից, անշուշտ, օգտվել են նաև հայ հեղինակները: Ահա թե ինչ է ասում Կեսարացին այս խորհրդի մասին. *«Մկրտութիւն զերեալոց փրկանք, պարտաւորութեանց թողութիւն, մահ մեղաց, դարձեալ ծնունդ ոգւոց, զգեստ լուսաւոր, կնիք անձեռնարկելի, կառք առ ի յերկինս, թագաւորական գրաւական, որդեգրութեան շնորհ»*[44]:

բ) Ս. Հաղորդություն. Եկեղեցու ծագման եւ առաջացման գործընթացում Հաղորդության խորհրդի հաստատումը կենտրոնական ու հիմնավոր տեղ է զբաղեցնում: Հայ մատենագիրներից Հովհան Օձնեցին նշում է, որ հաղորդությունը *«...աւանդ է տէրունական, զոր ի կատարման տնաւրէնութեանն հրամայեաց առնել ի յիշատակ ի մշտնջենաւորսն սրբութեան»*[45]: Նա այս խոսքերով ցույց է տալիս Հաղորդության քրիստոսահիմն խորհուրդը: Սրա վկայությունները տալիս են համատես Ավետարանները՝ ներկայացնելով, որ Քրիստոս այս սուրբ խորհուրդը սահմանեց վերջին ընթրիքի ժամանակ (Մատթ. ԻՁ. 26-28, Մարկ. ԺԴ. 22-25, Ղուկ. ԻԴ. 30): Հարկ է ընդգծել, որ Հովհան Օձնեցին մեծ երկյուղածությամբ է խոսում Հաղորդության խորհրդի մասին՝ այն համարելով *«ահաւոր»* խորհուրդ *«մարմնոյ եւ արեան Տեառն, որ կատարի ի փրկութիւն աշխարհի»*[46]: Այս խորհրդի բուն էությունն այն է, որ նրանով իրականանում է քրիստոնեական ճշմարիտ փրկությունը յուրաքանչյուր անհատի մեջ, առանց որի քրիստոնյան չի կարող լինել Քրիստոսի հետ, այսինքն՝ լինել փրկված:

Նույն հեղինակը հաղորդությունը որակում է որպես *«...պաշար առ Աստուած ուղեգնացութեանն իւրաքանչիւր ելս կատարածի կենաց պատրաստեալ պահի ի Քրիստոս հանգուցելոցն...»*, մինչեւ որ արդեն երկնքի արքայության մեջ Քրիստոսի հետ վայելենք ի սկզբանե պատրաստված հոգեւոր խորտիկները[47]: Այստեղ եւս այլաբանորեն բացատրվում է Հաղորդության խորհրդի կապը գալիք իրականության հետ: Նույն աներկբա համոզումով է խոսում Ս. Եփրեմ Ասորին՝ հաղորդության ընծաների անապական կերակուր դառնալու իրողության վերաբերյալ[48]:

Հովհան Մայրագոմեցին, խոսելով հաղորդության ընծաների՝ հացի ու գինու մասին, ասում է, որ *«...է մարմին եւ արիւն Քրիստոսի Աստուծոյ, տուեալ լինի փրկութիւն՝ սրբութեամբ ճաշակողացն, որդեգրութեան Հոգւոյն շնորհաց արժանանալ»*[49]: Նա ցույց է տալիս հաղորդության առարկայական եւ խորհրդական կողմերը, այլ կերպ ասած, հացն ու գինին իրա-

44 **Սուրբ Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց, Ս. Էջմիածին, 2008, էջ 428:
45 Ճառ Ա.՝ «Արհնութիւն նորաշէն եկեղեցւոյ», էջ 94:
46 Ճառ Բ.՝ «ՅԵկեղեցի», Անդ, էջ 97:
47 Ճառ Ա.՝ «Արհնութիւն նորաշէն եկեղեցւոյ», էջ 94:
48 Տե՛ս **Հակոբ Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ, Երեւան, 2007, էջ 81:
49 **Հովհան Մայրագոմեցի,** նշվ. աշխ., էջ 349:

պես փոխակերպվում են Քրիստոսի մարմնի եւ արյան: Այսու ընգծվում է նաեւ Աստծո որդեգրությունը, ինչպես նաեւ Սուրբ Հոգու շնորհներին արժանանալու կարեւորությունը: Աստվածաբանական կարեւոր գաղափարներ է առաջադրում նաեւ Որոգինեսը. *«...ճշմարիտ սնունդը Քրիստոսի մարմինն է, որը որպես Աստծո Բան, դարձել է մարմին՝ ըստ հեղեյալ խոսքի. «Եւ Բանը մարմին եղաւ» (Հովհ. Ա. 14): Երբ մենք այն ուտում եւ ընպում ենք, Նա իր օթեւանը հաստատում է մեր մեջ»*[50]:

Ստեփանոս Սյունեցին ներկայացնում է հաղորդության նաեւ ծիսական կողմը. *«Եւ «Քրիստոս պատարագեալ բաշխի» եւ փրկագործէ զեկեղեցի իւր, զի ի սմա հացին, որ մատուցանի Աստուծոյ Հաւր: Եւ բաժակաւն գոհութեան տուեալ լինի փրկութիւն սրբութեամբ ճաշակողացն»*[51], այնուհետեւ սուրբգրային տողերով ցույց տալիս, որ նոխազների ու զվարակների արյունը, այսինքն՝ հինկտակարանյան զոհաբերությունները բավական չէին փրկության իրագործման համար, այլ՝ միայն Քրիստոսի թափած արյունը:

3. Եկեղեցու սուրբգրային պատկերները. Հատկանշական է, որ հայ եկեղեցական մատենագիրները Եկեղեցու համար բավական հարուստ պատկերներ ու համեմատություններ են կիրառում, որոնց միջոցով արտահայտում են այդ բազմասահման հասկացության այլեւայլ կողմերը: Պետք է նշել, որ դրանք պատահական համեմատություններ չեն, այլ՝ իրական ու խորքային, որոնք լավագույնս արտահայտում են Եկեղեցու էությունը, կյանքը, գործունեությունը: Հարկ է փաստել նաեւ, որ դրանց հիմքերը Աստվածաշնչից են, առավելաբար՝ Հին Կտակարանից: Այս առնչությամբ եւս մեր մատենագիրների երկերում զգալի են հայրաբանական ժառանգության հարուստ ավանդները: Եկեղեցու՝ աստվածմարդկային իրականություն լինելը արտահայտելու համար նրանք օգտագործում են տեսանելի աշխարհի՝ *մարդկային մարմնի, հարսի, տան* եւ այլ պատկերներ:

ա) Քրիստոսի մարմին. Նորկտակարանյան ամենահայտնի պատկերը, որ կիրառում են հայ հեղինակները, «Քրիստոսի մարմին» փոխաբերությունն է: Ստեփանոս Սյունեցին հաստատում է, որ բոլոր հավատացյալները կազմում են Քրիստոսի մարմինը՝ Եկեղեցին. *«Քանզի ամենայն հաւատացեալք, որ եղեն եւ որ են եւ որ լինելոց են, սոքա մարմին Քրիստոսի ասին զոյ, որ է եկեղեցի»*[52]. այս պատկերը ցույց է տալիս Եկեղեցում հավաքագրվող հավատացյալների միությունը Քրիստոսի հետ: Այդ մարմնի մեջ հենց Աստված է ապահովում բազմակողմանի կապն Իր հետ: Իսկ մարդիկ, Քրիստոսի միջոցով մտնելով այդ կապի մեջ, իրապես միանում են Աստծուն: Քրիստոնեական հա-

50 **Որոգինես,** Աղոթքի մասին, Ս. Էջմիածին, 2007, էջ 119:
51 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ», էջ 501:
52 Անդ, էջ 503:

վարքը քրիստոնյաներին միավորում է Փրկչի հետ եւ կազմում մի ամուր մարմին: Ստեփանոս Սյունեցին, խոսելով ապագայի մասին, նշում է, որ Քրիստոսի հավատացյալները *«...յառնելոց են իւրաքանչիւր յազգս եւ գալոց յարեալոց են ի շինուած եկեղեցւոյ այս, որ է մարմին Քրիստոսի»*[53], եւ այստեղ կարեւորում մկրտության դերը: Անշուշտ, մկրտությամբ հավատացյալները՝ Քրիստոսի մարմնակիցները, Նրա հետ կազմում են մեկ հոգեւոր մարմին: Նրանք մկրտությամբ վերստին ծնվելով *(աւազանին վերածնութեամբ)*՝ Քրիստոսի հետ մեկ մարմին են դառնում. եւ Աստծո Որդին Սուրբ Հոգու միջոցով գործում է նրանց մեջ: Այսպիսով՝ կարելի է ասել, որ Եկեղեցին՝ Քրիստոսի խորհրդավոր մարմինը, կենդանի ու գործող անդամների ներդաշնակ միասնությունն է[54]: Օգոստինոս Երանելին այն միտքն է արտահայտում, որ *«...մարմինը բաղկացած է շատ անդամներից, եւ միայն հոգին է կյանք տալիս բոլոր անդամներին... Ինչպես մեր հոգին է մեր անդամների մեջ, այդպես եւ Ս. Հոգին է Քրիստոսի Եկեղեցու մարմնի անդամներում»*[55]:

Հովհան Օձնեցին Եկեղեցու համար քանիցս օգտագործում է Քրիստոսի մարմնի պատկերը. *«...ի Քրիստոսէ շինեալս ի մարմին իւր եկեղեցի»*[56], ապա գրում է նաեւ. *«...զազգս ի հոգեւոր համաձայնութեան եաց Տէր մեր, եւ շինեաց ի մարմին իւր զաշխարհակ՝...զԿաթողիկէ սուրբ»*[57]: Նա փորձում է ցույց տալ, որ Եկեղեցու՝ Քրիստոսի խորհրդական մարմնի միությունը հաղթահարում է մարդկային բոլոր պառակտումները, հավատացյալներին հոգեւոր համաձայնության բերում:

Եկեղեցու նշանակալից առանձնահատկություններից մեկն էլ *«աճի»* գաղափարն է, որն արտահայտված է Ստեփանոս Սյունեցու երկերում: Վերջինս այն համոզմունքն է հայտնում, որ *«Նա (եկեղեցին) եւ այժմ չէ կատարեալ, վասն զի դեռ աւազանին վերածնութեամբ եւ զանազան առաքինութեանց մասամբք աճէ...»*[58]: Եկեղեցին աճում է ոչ թե իր էությամբ, քանի որ էությամբ այն չի կարող փոփոխության ենթարկվել, այլ իր անդամներով, որոնք *«աւազանին վերածնութեամբ»*, այսինքն՝ մկրտությամբ մուտք են գործում Եկեղեցի եւ ամրագրվում Քրիստոսի մարմնին: Հետեւաբար, ինչպես Ստեփանոս Սյունեցին է նկատում, Եկեղեցին *«...աւր ըստ աւրէ երթայ եւ նորոգի»*[59]:

---

53 Անդ:
54 Տե՛ս **Д. Богдашевский**, Послание св. Апостола Павла к Ефесянам, Киев, 1904, էջ 560:
55 Տե՛ս **Հակոբ Քյոսեյան,** նշվ. աշխ., էջ 287:
56 Ճառ Բ.՝ «ՅԵկեղեցի», էջ 95:
57 Անդ:
58 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ», էջ 503:
59 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 507:

բ) Հարս. Հայ եկեղեցական մատենագիրների երկերում Քրիստոսի եւ Եկեղեցու միությունը հաճախ արտահայտվում է փեսայի ու հարսի պատկերով: Այս պատկերը Հովհան Մայրագոմեցին ներկայացնում է հետեւյալ կերպ. *«Եւ արդ է եկեղեցի հարսն Քրիստոսի... Փեսայ Քրիստոս է, ըստ իւրում անսուտ բանին, եւ հարսն է եկեղեցի»*[60]: Նա ցույց է տալիս նաեւ տվյալ պատկերներից մեկի՝ հարսի, այսինքն՝ Եկեղեցու մի կարեւոր գործառույթ. *«Իսկ աւազանն, այս մշտածին որովայն հարսինն Քրիստոսի է, որ է եկեղեցի»*[61]: Ինչպես հարսին է բնորոշ որդեծնության հատկությունը, որով ապահովվում է մարդկային ցեղի շարունակությունը, այնպես եւ Եկեղեցին մկրտության ավազանի միջոցով պարգեւում է նոր ծնունդ, որը մարմնական չէ, այլ՝ հոգեւոր:

Հովհաննես Քորեպիսկոպոսը պարզ եւ հստակ սահմանում է. *«Հարսն եկեղեցի է եւ փեսայ Քրիստոս»*[62]: Իսկ Ստեփանոս Սյունեցին, նկարագրելով Իսահակի ու Սառայի պատմությունը (զավակ չէին ունենում), այն համեմատում է Եկեղեցու հետ. *«Այսպէս եկեղեցի ամոյ գոլով զառաջինն եւ անայր եւ յորմէ հետէ հարսնացաւ Քրիստոսի»*[63]:

Փեսայի ու հարսի սուրբգրային այս պատկերն առկա է Հովհան Օձնեցու երկերում. նա Եկեղեցին ներկայացնում է որպես հարսնարան եւ առագաստ. *«Այլ եւ հարսնարան զսա իմանամք, եւ առագաստ երկնաւոր թագաւորին, քանզի փրիզերակոչ Աւետարանաւն լուսաւորեալ, եւ ի խաւսրման կան ի սմա հաւատով եւ հոգեւոր լուացմամբ աւազանին փեսային երկնաւորի հոգիք արդարոց»*[64]: Հովհան Օձնեցին սրանով վեր է հանում փեսայի ու հարսի պատկերի բուն խորհուրդը: Ինչպես փեսան ու հարսը, այնպես էլ Քրիստոս եւ Եկեղեցին սիրո ամենազոր ու անխզելի կապով իրար են միացած:

գ) Աստծո տուն եւ բնակարան. Հովհան Օձնեցին Եկեղեցին բնորոշում է. «Տուն Աստուծոյ անուանեմք», ապա ցույց է տալիս դրա՝ Աստծո խորհրդավոր բնակարան լինելու իրողությունը. *«...Աստուծոյ բնակարան հաւատով իմացեալ լինի»*[65]: Ըստ Ստեփանոս Սյունեցու՝ *«...եկեղեցի տուն անեղին Աստուծոյ»*[66], ապա շարունակում է. *«...քանզի լուսոյ բնակարան է եւ չունի մասն կեղծաւորութեան»*[67]: Նրա տեսակետի համաձայն՝ եթե Հիսուս Տա-

60 **Հովհան Մայրագոմեցի,** նշվ. աշխ., էջ 350:
61 Անդ, էջ 352:
62 **Հովհաննես Քորեպիսկոպոս,** նշվ. աշխ., էջ 615:
63 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 513:
64 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», էջ 96:
65 Անդ, էջ 103:
66 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ», էջ 503:
67 Անդ, էջ 491:

ճարը *«տուն Հայր իւրոյ»* էր անվանում, ապա Եկեղեցին, առավել ևս, *«Ասպծո տուն»* է կոչվում, քանի որ *«...որպէս ասէրն, թէ առաւել քան զտաճարն է ասպ»*[68]*:* Հեղինակը Պողոս առաքյալի ասպվածաբանական հիմունքներով ցույց է տալիս, որ Ասպծո տունը *«մեք իսկ եմք»:*

դ) Նոր Իսրայել (նոր ժողովուրդ). Կարելի է նկատել նաև այն անդրադարձը, որով Եկեղեցին բնութագրվում է որպես նոր Իսրայել՝ Ասպծո նոր ժողովուրդ: Հովհան Օձնեցին, խոսելով Եկեղեցու մասին, այն բնութագրում է որպես Տիրոջ ժողովուրդ. *«...զի ժողովուրդ քո լեալ ուրախաւացուք ի քեզ հաւերժապէս»*[69]*:* Եկեղեցու մասին իր երկրորդ ճառում նա Քրիստոսի հավատացյալներին անվանում է Սիոնի նոր որդիներ. *«...եւ պատուիրէ մեզ նոր որդւոց Սիովնի»*[70]*:* Այնուհետև բացատրում է՝ եթե *«...շինեալն ի Դաւթայ Սիովնն կոչեցեալ»*-ը ամրոց ու ժողովարան է, ապա Եկեղեցին առավել ևս ամուր ապաստան է իրեն դիմող, դեպի իրեն եկող ազգերի ու ժողովուրդների համար:

Հստակ է, որ Եկեղեցին ծագում է Ասպծո հինկտակարանյան ժողովրդից, սակայն պետք է փաստել, որ սա նոր ժողովուրդ է՝ ձեռավորված Քրիստոսի արյան զնով: Ըստ Օձնեցու՝ *«...առաքելական քարոզութեամբն ժողովեցան ի մեղացն թափառումէն... եւ եղեն նոր ժողովուրդ եւ նոր եկեղեցի»*[71]*:* Այն Ասպծո նոր Իսրայելն է, ինչպես գրում է Հովհան Օձնեցին, *«ուսպի եւ եպ փրկութիւն նորոյս Իսրայելի»*[72]*:* Ակնհայտ է, որ Ասպծո հինկտակարանյան ժողովուրդը բաղկացած էր մեկ ազգից, իսկ Եկեղեցին՝ նոր ժողովուրդը, արդեն ընդգրկում է բոլոր ազգերին: Այդ նոր ժողովուրդը ձեռավորվում է նորովի: Ստեփանոս Սյունեցու երկերում հանդիպում ենք «նորածնուած նոր ժողովուրդ»[73] արտահայտությանը, որը պարզաբանում է, թե Եկեղեցին՝ իբրև իրականություն, աչքի է ընկնում գրեթե բացարձակ նորությամբ: Իսկ այդ նորությունը, ըստ հեղինակի, պայմանավորված է Մկրտության սրբազան խորհրդով:

ե) Դրախտ. Հայ մատենագիրների գործերում Եկեղեցին էապես ըմբռնվել ու գիտակցվել է մարդու փրկության հետ իր ունեցած գերագույն գործառույթով: Այս նկատառումով՝ Եկեղեցին հաճախ պատկերվում է իբրև դրախտ. *«Խոստացայ ասել զսա դրախտ ասպուածագործ եւ սրովբէապարիսպ»*[74], - գրում է Հովհաննես Քորեպիսկոպոսը: Ստեփանոս Սյունեցին ներբողա-

68 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 514:
69 Ճառ Ա.՝ «Հիմնարկէք եկեղեցւոյ», էջ 88:
70 Ճառ Բ.՝ «Եկեղեցի», էջ 95:
71 «Նորին Տեառն Յովհաննիսի Հայոց Կաթողիկոսի յաղագս կարգաց Եկեղեցւոյ», ՄՄ, հտ. Է., էջ 78:
72 Ճառ Ա.՝ «Հիմնարկէք եկեղեցւոյ», էջ 89:
73 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 509:
74 **Հովհաննես Քորեպիսկոպոս,** նշվ. աշխ., էջ 613:

կան խոսք է ուղղում Եկեղեցուն. *«Ուրախ լեր, եկեղեցի՛ սուրբ, իմանալի դրախտ»*[75]: Նա պատշաճ եւ համակողմանի վերլուծությամբ ցույց է տալիս, որ եդեմական դրախտի փոխարեն Եկեղեցին երկրի վրա մեզ ներկայանում է որպես հոգեւոր դրախտ եւ նույնիսկ ավելի պայծառ, քան առաջինը: Հովհան Օձնեցու համար Եկեղեցին *«...է դրախտ Աստուածատունկ անմատչելի չարաց»*[76]: Եթե օձի (սատանայի) խաբեությամբ մարդն արտաքսվել է *«ի նմանէ»* (այն դրախտից), ապա Քրիստոսի շնորհիվ կրկին հնարավորություն է տրանում *«ի սմա մտանել»*: Եթե այնտեղ եդեմաբուխ աղբյուրը ոռոգում էր բուրաստանը եւ այնտեղից չորս կողմի բաժանվում, ապա այստեղ՝ Եկեղեցում, ճշմարտության խոսքը, *«աղբեւրաբար»* բխելով Հորից, *«զԱւետարանին հոսէ գնացս ընդ չորեքծագեան տիեզերաց»*[77]:

զ) Տապան. Փրկագործության խորհրդի հետ Եկեղեցու սերտ առնչությունը տեղ է գտել նաեւ տապանի պատկերում, որը կործանարար ջրհեղեղից մարդու փրկության ապավենը եղավ. *«...դիմեսցուք ի սուրբ տապանն Աստուծոյ ի ձեռն աղաւթից եւ ուժգին արտասուաց, քանզի հանդերձեալ է գոռոգն գալ ապստամբ ջրհեղեղ ենոթեան»*, - կոչ է անում Հովհաննես Քորեպիսկոպոսը: Եկեղեցին տապանի հետ է համեմատում նաեւ Հովհան Օձնեցին. *«Խորհրդածի եկեղեցի եւ Նոյեան տապանին»*[78]: Ի տարբերություն Նոյան տապանի՝ Եկեղեցում հավատացյալների բազմությունը փրկվում է *«ի սահմանահոյզ հեղձմանէ»*: Մյուս կարեւոր տարբերությունն այն է, որ եթե տապանից դուրս եկած կենդանիները շարունակեցին իրենց նույն կենսակերպը, ապա *«...ասպի (Եկեղեցուց) գազանաբարոյքն արձակեալք զգաւանացան յիմասպս հոգեւոր որդիութեան Աստուծոյ»*[79]: Հովհան Օձնեցու այս մտքերը շատ նման են Ստեփանոս Սյունեցու արտահայտած գաղափարներին. վերջինս եւս անդրադառնալով տապան-Եկեղեցի զուգահեռին՝ շեշտում է Եկեղեցու մաքրագործող ու փրկագործող հատկությունը. *«Իսկ եկեղեցի գազանաբարոյ եւ անասնական մարդիկ մտեալ՝ որդիք Աստուծոյ լինին... զգաւանական եւ կերպարանաց անասնոց փոխին»*[80]: Եկեղեցին տապանի հետ համեմատելով՝ համարժեք մտքեր է արտահայտում նաեւ Ս. Հովհան Ոսկեբերանը: Նա նշում է, որ տապանը վերցրեց *«անմիտներին»*, փրկեց ջրհեղեղից եւ նույն կերպ էլ արձակեց նրանց, մինչդեռ Եկեղեցին ընդունում է *«անմիտներին»*, մեղավորներին ու ոչ միայն փրկում, այլեւ՝ դաստիարակում, ձեւավորում նրանց: Տապանն ընդունում է ագռավին իբրեւ ագռավ եւ

75 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 505:
76 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», էջ 97:
77 Անդ, էջ 97-98:
78 Անդ, էջ 98:
79 Անդ:
80 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 507:

բաց թողնում որպես այդպիսին, իսկ Եկեղեցին ընդունում է ագռավին եւ բաց թողնում նրան աղավնի դարձած[81]:

է) Աշտարակ. Համեմատաբար ընդարձակ կերպով կիրառվել է նաեւ աշտարակի պատկերը: Հովհան Օձնեցու համար Եկեղեցին իմանալի աշտարակ է[82]: Եթե հինկտակարանյան աշտարակը մեկ լեզուն *«ի բազումս բաժանեաց»* եւ քանդեց մարդկանց ջար միաբանությունը, ապա այս աշտարակը՝ Եկեղեցին, *«զքակեալն եւ զանջատեալսն ած ի մի»* եւ բոլորին միախորհուրդ դարձրեց Քրիստոսի *«մի հոյս կոչմանն»*[83]:

Ստեփանոս Սյունեցին, խոսքն ուղղելով Եկեղեցուն, գրում է. *«Ուրա՛խ լեր, եկեղեցի՛ սուրբ, աշտարակ հզաւր»*[84]: Հինկտակարանյան աշտարակի նկատմամբ Եկեղեցու առավելությունն ընդգծելու համար հեղինակը ցույց է տալիս, որ եթե այն աշտարակը առանց Աստծո կառուցվեց եւ այդ իսկ պատճառով արագ կործանվեց, ապա Եկեղեցին հիմնադրվեց *«յամենեցուն Տեառնէն»:* Նա այլաբանական իմաստով բացատրում է, որ *գէրք, անձրեւք, հողմք* չկարողացան կործանել Եկեղեցին: Ստեփանոս Սյունեցին ընդգծում է, որ Աստված մեզ առանց *«աշխատութեան եւ զեկեղեցի-զաշտարակ, որ հանէ զմեզ ի բարձունս երկնից»*[85]: Եկեղեցու՝ աշտարակի պատկերի վաղագույն օրինակներից կարելի է գտնել «Հերմասի հովիվը» երկում. *«Դու տեսա՞ր աշտարակը կառուցող բազմությունը», - հարցրեց նա: «Տեսա, Տե՛ր», - ասացի: «Իսկ աշտարակը ի՞նչ է նշանակում», - հարցրեցի ես: «Դա եկեղեցին է», - ասաց նա»*[86]:

ը) Ուխտի տապանակ. Հին Կտակարանում Եկեղեցին ներկայացված է հրեա ժողովրդի կրոնական ավանդության ամենասուրբ ու նվիրական առարկաներից Ուխտի տապանակի պատկերով: Ստեփանոս Սյունեցին գրում է. *«... տապանակն եկեղեցոյ խորհուրդն նկարէ մեզ»*[87]: Հայտնի է, որ Իսրայելի համար այն փրկագործ եւ ուղղիչ խորհրդական ուժով օժտված առարկա էր, ինչպես նաեւ այդ ժողովրդի ազատագրման ու հաղթանակի խորհրդանիշը: Ըստ Ստեփանոս Սյունեցու՝ եթե տապանակի մեջ պահվում էր մանանայով լի ոսկի սափորը, ապա Եկեղեցում՝ *«յոսկեղէնս եւ յանարատ ոգիս ամբարին աստուածային եւ երկնային խորհուրդք»*[88]:

---

81 Տե՛ս **Св. Иоанн Златоуст**, Полное собрание творений, т. 1, М., 1991, էջ 859-860:
82 Ճառ Բ.՝ «յԵկեղեցի», էջ 99:
83 Անդ:
84 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 508:
85 Անդ:
86 «Հերմասի հովիվը», ռուսերենից թարգմ.՝ Մեհրուժան Բաբաջանյանի, Երեւան, 1999, էջ 66-67:
87 **Ստեփանոս Սյունեցի,** «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», էջ 512:
88 Անդ:

Վերոբերյալներից բացի, օգտագործված են այլ շատ պատկերներ, ինչպես օրինակ՝ *հակոբյան սանդուղք, աբրահամյան խորան, նավ, սուրբ լեռ, Սաբեկա ծառ, Սիոնի դուստր* եւ այլն:

Այսպիսով՝ հայ եկեղեցական մատենագիրները, ասփվածաշնչյան հիմքերի եւ հայրախոսական հարուստ ժառանգության հետեւությամբ, ցույց են տրվել Եկեղեցու դերը, նրա առանցքային կարեւորությունն ու առաքելությունը քրիստոնեական կյանքում: Իրենց մասնահատուկ մտկառուցումների հիման վրա նրանք պարզաբանում են այդ բազմաշերտ ու բովանդակային առումով ընդգրկուն հասկացության այս կամ այն կողմը՝ դրանք ներկայացնելով տարբեր տեսանկյուններից: Դիտարկելով Եկեղեցու հիմնադրության վերոնշյալ ասպեկտները՝ կարելի եզրակացնել, որ Եկեղեցու հիմնադրումը որոշակի գործողություն չէ, այլ՝ շարունակական գործընթաց, իրադարձությունների կապակցված ամբողջություն:

Մյուս կողմից սուրբգրային պատկերների կիրառումը առանձնահատուկ ինքնատիպություն է հաղորդում հայ եկեղեցաբանական մտքին: Դիպուկ բնորոշումներով գովերգվում են Եկեղեցու արժանիքները, ասփվածաբանական ծանրակշիռ հիմնավորումներով ցույց են տրվում հինկտակարանյան հայտնի իրողությունների հետ ունեցած խորհրդաբանական աղերսները, ընդ որում, այդպիսի յուրաքանչյուր համեմատության դեպքում մեր եկեղեցական մատենագիրները կարողանում են կուռ տրամաբանությամբ ընդգծել դրանց նկատմամբ Եկեղեցու ունեցած անհամեմատ առավելությունը:

Ընդհանրացնելով վերոնշյալ դիտարկումները՝ կարող ենք ասել, որ Եկեղեցին իր էությամբ խորքային անսպառ հասկացություն է, երկակի իրողություն, խորհուրդ, որ դրսեւորվում է պատմական իրականության մեջ:

РЕЗЮМЕ

У армянских церковных авторов VII-VIII веков было довольно развитое экклезиологическое мышление. Они создали и развили довольно когерентное учение о Церкви. Всесторонне используя классические богословские традиции, они раскрывают идею об основании Церкви до акта творения. Они показывают, что Церковь как таинство существовала в промысле Божьем еще до создания мира.

Армянские авторы касаются важнейших аспектов основания Церкви, уделяют особое внимание проблеме ее власти, а так же таинствам крещения и евхаристии, являющимся существенными вехами непрерывного процесса образования и формирования Церкви.

Другой характерной особенностью является то, что авторы представляют дефиницию «Церковь» еще и с помощью библейских образов и метафор. Использование этих образов (тело Христово, невеста, дом Божий, новый Израиль, рай, ковчег, башня и т. д.) раскрывает различные проявления многосторонней реальности Церкви. Точными определениями прославляются разнообразные заслуги Церкви, вескими богословскими аргументами раскрываются символистические взаимосвязи с известными ветхозаветными явлениями, при этом в каждом случае основанная Христом Церковь рассматривается как приоритетное явление.

SUMMARY

The Armenian ecclesiastical authors of the 7-8th centuries possessed a considerably developed ecclesiological consciousness and developed a rather comprehensive ecclesiological teaching. Relying on the classical Christian traditional thinking, they give prominence to the concept of the pre-creation foundation of the Church, showing that Church as a mystery existed in the providential design of God prior to the creation of the cosmos. The crucial aspects of the foundation of the Church and the specific issue of authority and power in the Church receive substantial treatment, as do the mysteries of Baptism and the Eucharist, both of which constitute the essential milestones in the formation and development of the Church itself.

Another characteristic feature is the depiction of the concept of the Church through Biblical images and similitudes, through which they reveal the manifold manifestations of the multilayered reality of the Church (e.g. Body of Christ, Bride, Household of God, New Israel, Ark, Paradise, Tower, etc.). Through sharp and precise theological argumentation, they demonstrate the variety of functions of the Church, highlighting the symbolic associations with Old Testament realities, confirming, in each case, the Church's supersession of the Old Testament witness.